# ԿԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

# ԲԱՆԱՁԵՎԸ.

1939 թ. հունվարի 13–17

396
Կ-49

ԱԴՐԼԿՅԽՄ ԿԵՆՏԿՈՄ
ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԲԱՔՈՒ—1939 Թ.

396
4-49
0120-10

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

# ԿԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

# ԲԱՆԱՁԵՎԸ

1939 թ. հունվարի 13—17.

411 —1

ԱԴՐԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄ
ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԲԱԳՈՒ—1939 Թ.

56.021

20 MAY 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍԽ ССР

43339.63

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում ստեղծել է հնում ստրկացված յեվ ճնշված կնոջ լիովին ազատագրման բոլոր պայմանները:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության 122-րդ հոդվածն ասում է. «Կնոջը ԽՍՀՄ-ում տրվում է տղամարդկանց հավասար իրավունք — տնտեսական, պետական, կուլտուրական յեվ հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում»:

Լենինի — Ստալինի կուսակցությանն անսահմանորեն նվիրված խորհրդային միլիոնավոր կանայք ազնվորեն և անձնվիրաբար աշխատում են գործարաններում, ֆաբրիկներում, կոլտնտեսություններում, գիտական հիմնարկություններում, դպրոցներում, համառությամբ տիրապետում են գիտության ու կուլտուրայի բարձունքներին:

Խորհրդային Ադրբեջանում ադրբեջանուհին դեն նետելով դարավոր չադրան, ակտիվորեն մասնակցում է յերկրի հասարակական և պետական կյանքին:

Ադրբեջանուհին ֆաբրիկներում, գործարաններում և բամբակային դաշտերում ստախանովական աշխատանքի օրինակներ է ցույց տալիս: Ազատվելով ֆեոդալա-նահապետական հա-

րաբերությունների ճնշումից, ադրբեջանուհին տղամարդկանց հետ հավասարապես, լենինյան-ստալինյան ազգային իմաստուն քաղաքականության հիման վրա, հաջողությամբ կառուցում է ադրբեջանական ազատատենչ ժողովրդի յերջանիկ կյանքը:

Ժողովրդի ստոր թշնամիները, ֆաշիզմի տրոցկիստական – բուխարինական յեվ բուրժուանացիոնալիստական վարձկանները փորձել են մեր՝ յերկրում վերականգնել կապիտալիզմը, մուսավաթական իշխանությունը, ցանկացել են ճորտացնել աշխատավորներին, նրանց ստրուկության տալով կապիտալիստներին, կալվածատերերին, խաներին, բեգերին, աղալարներին, զրկել խորհրդային կնոջը նվաճած բոլոր իրավունքներից, մատնել նրան ստրկական գոյության:

Բուրժուական նացիոնալիստները, մուսավաթները, դաշնակները, տրոցկիստական–բուխարինական բանդիտների հետ միասին, ձգտում եյին ադրբեջանական ժողովուրդը կտրել խորհրդային ժողովրդի ընդհանուր զարգացումից, ռուսական մեծ կուլտուրայից: Նրանք ամեն կերպ ճգնում եյին պահպանել նահապետական – ֆեոդալական այլանդակ հարաբերությունները, հայտարարելով այն ադրբեջանական ժողովրդի «ազգային առանձնահատկությունը»:

Փառապանծ ներքգործժողկոմատականները, կոմունիստական կուսակցության ղեկավարու-



թյամբ, ամբողջ խորհրդային ժողովրդի օգնությամբ, վոչնչացրին ստոր թշնամիներին և շարունակում են մերկացնել ու ջախջախել նրանց:

ՀամԿ(բ)Կ և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ ՀամԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեյի 7-րդ պլենումը բացահայտելով ու վռնդելով Լենինյան կոմյերիտմիության Կենտկոմի նախկին հակակուսակցական, թշնամական ղեկավարությունը, մոբիլիզացիայի յե յենթարկում ամբողջ կոմյերիտմիությանը՝ ժողովրդի թշնամիների դեմ անխնա պայքարի համար:

Կոմյերիտական կազմակերպությունների խընդիրն է՝ ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի լույս ընծայման կապակցությամբ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. նոյեմբերի 14-ի պատմական վորոշման համաձայն արմատապես բարելավել իդեական – քաղաքական աշխատանքի դրվածքը յերիտասարդ կանանց մեջ, օգնել նրանց՝ տիրապետելու բոլշեվիզմին: Ադրբեջանի կոմյերիտական կազմակերպությունների և ժողովրդական լուսավորության օրգանների թույլ աշխատանքի հետեվանքով, յերիտասարդ կանանց մեջ քաղաքական – դաստիարակչական աշխատանքը միանգամայն անբավարար է դրված:

Համագումարի բացահայտած փաստերը՝ յերիտասարդ կանանց նկատմամբ ֆեոդալա–ճորտատիրական մնացորդների մասին (անչափահասների նշանելն ու ամուսնացնելը, չադրայի

կրումը և այլն) ցույց են տալիս, վոր կոմյերիտական կազմակերպությունները, Լուսժողկոմատը, դատական օրգանները և դատախազությունը վճռական պայքար չեն մղում անցյալի այս ամոթալի ժառանգության դեմ:

Դատական յեվ դատախազության օրգանները կանանց իրավունքները խախտողներին բավարար չափով դատական պատասխանատվության չեն յենթարկում: Լուսժողկոմատը յեվ լուսավորության օրգանները տեղերում վճռական միջոցներ չեն ձեռք առնում դպրոցներից աղջիկ սովորողների մասսայական հոսունության դեմ, աշխատանք չեն տանում դեռևս ուսմամբ չընդգրկված աղջիկներին դպրոցները ներգրավելու, անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու համար, անբավարար են ղեկավարում մանկապարտեզները, հատկապես գյուղական շրջաններում:

Կին յերիտասարդության առաջին համագումարի վորոշումները չդարձան ժողովրդական լուսավորության մարմինների յերիտասարդ կանանց մեջ տարվող աշխատանքի ծրագիրը:

Առողջժողկոմատը և առողջապահության տեղական մարմինները մանկական կոնսուլտացիաներում, ծննդյան տներում յեվ մանկամսուրներում յերիտասարդ մայրերի սպասարկման փաստերի կողքով են անցնում:

Առողջժողկոմատի սիստեմում կին յերիտասարդության առաջ քաշումը ղեկավար աշխատանքի



դեռևս թույլ է տարվում: Առողջժողկոմատը չի կատարել յերիտասարդ կանանց առաջին համագումարի վորոշումը՝ ծննդագինեկոլոգիական հիվանդանոցի կառուցման ավարտման յեվ շահագործման հանձնելու մասին:

Համագումարը նշում է, վոր ԱդրՍՍՀ Հողժողկոմատը թույլ է տանում աշխատանքը կին յերիտասարդության մեջ ստախանովական շարժման ծավալման կազմակերպման համար, չի զբաղվում յերիտասարդ ստախանովուհիների աշխատանքի նվաճումների և մեթոդների ուսումնասիրությամբ ու տարածմամբ:

Ադրբեջանի մի շարք շրջաններում կին յերիտասարդությունից գյուղատնտեսության համար մեխանիզատորական կադրերի պատրաստումն ըստ եյության տապալված է: Ագրոտեխուսման գործը կոլտնտեսություններում, մանավանդ կին յերիտասարդության մեջ, վատ է դրված: Լավագույն ստախանովուհիների առաջ քաշումը ղեկավար աշխատանքի (շրջհողբաժվար, կոլտնտեսությունների վարչությունների նախագահներ, բրիգադիրներ) Հողժողկոմատն անց չի կացրել:

Համագումարը գտնում է, վոր ՊԱՋԸ-Ավիաքիմի կենտրոնական և Բաքվի խորհուրդները, Ֆիզկուլտուրայի յեվ սպորտի գործերի Ադրբեջանի յեվ Բաքվի կոմիտեները չեն կատարել կին յերիտասարդության առաջին համագումարի վորոշումը՝ կին յերիտասարդության մեջ պաշտպա-

նական-ֆիզկուլտուրային աշխատանքի ծավալման, աղջիկներին ՊԱՇԸ-Ավիաքիմի շարքերը և սպորտային ընկերությունները ներգրավելու մասին: Չեն կատարվել պաշտպանական-ֆիզկուլտուրային կրծքանշանների նորմաների հանձնման կոնտրոլային թվերը:

Կին յերիտասարդության մեջ հետագայում աշխատանքները բարելավելու նպատակով, կին յերիտասարդության յերկրորդ համագումարը վորոշում է.

1. Կին յերիտասարդության 2-րդ Համաադրբեջանյան համագումարը գտնում է, վոր կին յերիտասարդության մեջ տարվող աշխատանքում հետագա նվաճումների հիմնական պայմանն է հանդիսանում բոլշևիզմին տիրապետելու մասին կուսակցության ցուցումների անշեղ կիրառումը: «ՀամԿ(բ)Կ-ի պատմության համառոտ դասընթացը» և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. նոյեմբերի 14-ի վորոշումը զինում են ամբողջ խորհրդային յերիտասարդությանը՝ բոլշևիկների Կոմունիստական կուսակցության հերոսական պատմությունը խորն ուսումնասիրելու համար: Համագումարը կոչ է անում Ադրբեջանի աղջիկներին՝ տիրապետելով բոլշևիզմին և բարձրացնելով հեղափոխական զգոնությունը, անողոքաբար մերկացնել և վոչնչացնել տրոցկիստական-բուխարինական, բուրժուա-նացիոնալիստական, մուսավաթական-դաշնակցական և ֆաշիզմի այլ գործակալներին և վճռականորեն պայքարել ֆեոդալա — ճորտատիրական սովորույթների մնացորդների դեմ:



2. Համագումարը պահանջում է կոմյերիտական կազմակերպություններից՝ արմատական կերպով բարելավել գաղափարական-քաղաքական աշխատանքը կին յերիտասարդության մեջ, ոգնել նրանց քաղաքական կրթությանը և հաջորդաբար կազմակերպել դասախոսություններ, զեկուցումներ՝ ՀամԿ(բ)Կ պատմության ուսումնասիրության քաղաքական ու թեորետիկական հարցերից:

3. Կին յերիտասարդության համագումարը կոչ անելով պայքարել ֆեոդալա — ճորտատիրական մնացորդների դեմ (չադրայի կրելը, անչափահասներին ամուսնացնելը և այլն), պահանջում է կոմյերիտական կազմակերպություններից, խորհրդային և դատական-դատախազական մարմիններից՝ վճռական միջոցներ ձեռք առնել ֆեոդալա — ճորտատիրական մնացորդների լիկվիդացիայի համար:

Համագումարը գտնում է, վոր ֆեոդալա — նահապետական կենցաղի մնացորդների վերացման գործում, — անչափահասներին ամուսնացնելու դեպքեր և այլն, — անհրաժեշտ է վերանայել ամուսնության, ընտանիքի ու խնամակալության և քաղաքացիական դրության վավերագրերի մասին յեղած օրենքի կոդեքսը, վորից յելնելով խնդրել ԱդրՍՍՀ-ի Արդարադատության ժողկոմատին՝ ԱդրՍՍՀ կառավարության առաջ

միջնորդել այս հարցի մասին: Համագումարը գտնում է, որ ԱդրԽՍՀ-ում ամուսնության համար սահմանված 16 տարեկան հասակը կանանց վերաբերյալ ցածր է: Վաղ ամուսնությունն ազդում է հենց իրենց՝ կանանց և յերեխաների վրա: Համագումարը գտնում է, որ ամուսնության համար 16 տարեկան հասակը հանդիսանում է վաղ նշանադրության պատճառներից մեկը յեվ դրա հետևանքով է, որ աղջիկները թողնում են դպրոցը:

Սրանից յելնելով, համագումարն անհրաժեշտ է համարում ԱդրԽՍՀ-ի կառավարության առաջ հարց հարուցել Ադրբեջանում աղջիկների համար ամուսնության հասակ սահմանելու 18 տարին:

Գտնելով կանանց ակտիվի ավելի լայն ներգրավման անհրաժեշտությունը ֆեոդալա-ճորտատիրական մնացորդների դեմ պայքարելու գործում՝ համագումարն ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմի, Հանրապետության դատախազության յեվ ԱդրԽՍՀ-ի Արդարադատության ժողկոմատի առաջ հարց է դնում 1939 թ. առաջին կիսամյակում հրավիրել կին յերիտասարդության ակտիվի շրջանային խորհրդակցություններ, իսկ հետո շրջանային դատախազների, դատական աշխատողների և կանանց ակտիվի հետ միասին հանրապետական խորհրդակցություն՝ ֆեոդալա-ճորտատիրական մնացորդների լիկվիդացիայի հարցի մասին:



Բոլորովին անբավարար համարելով դատական և դատախազական մարմիններում կանանց հիմնական աշխատանքի առաջ քաշման գործը՝ համագումարն անհրաժեշտ է գտնում 1939 թվականին իրականացնել կանանց առաջ քաշման գործն այդ մարմիններում:

Միաժամանակ համագումարը կոմյերիտական կազմակերպությունների, ինչպես նաև հանրապետական դատախազության ուշադրությունն է հրավիրում դեպի արտադրության, հիմնարկությունների, սովխոզների, կոլխոզների և այլն դատախազական ոժանդակ խմբակներում մեծ չափով կանանց ընդգրկելու անհրաժեշտությունը, և մասսայական բացատրական աշխատանքի ուժեղացումը՝ բնակչության մեջ:

Համագումարը դատախազության և Ադրբեջանական ԽՍՀ-ի Արդարադատության ժողկոմատի ուշադրությունն է հրավիրում այս կարգի հանցագործությունների համար սիստեմատիկ ցուցադրական պրոցեսներ կազմակերպելու անհրաժեշտության վրա՝ քաղաքներում, շրջկենտրոններում, գյուղերում և արտադրության մեջ:

4. Ֆեոդալա — ճորտատիրական մնացորդների առկայությունը համարելով հակակրոնական թույլ պրոպագանդայի ուղղակի հետևանք՝ համագումարն ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմի, խորհրդային մարմինների, պրոֆմիությունների, ՄԱՄ, հասարակական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում դեպի կին յերիտասարդության

մեջ հակակրոնական պրոպագանդայի ուժեղացման անհրաժեշտությունը, աղջիկներին հակակրոնական թեմաների շուրջը դասախոսություններ, զեկուցումներ կազմակերպելու միջոցով Մարտնչող Անաստվածների միության մեջ ներգրավելը:

5. Համագումարը նշում է ֆեոդալա-ճորտատիրական մնացորդների գոյության փաստերը՝ աղջիկների կողմից դպրոցը թողնելը,— և մեր հանրապետության կին յերիտասարդությանը կոչ է անում վճռական պայքար տանել այդպիսի չարիքի դեմ ու պահանջում է Լուսժողկոմատից՝ 1938–39 ուս. տարում ուսումով ընդգրկել այն յերիտասարդ կանանց, վորոնք անցած տարիներին թողել են դպրոցը: ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմի հետ միասին մարտ ամսում անցկացնել միջշրջանային խորհրդակցություններ ժողովրդական լուսավորության մարմինների ակտիվի և կոմյերիտական աշխատողների հետ միասին՝ աղջիկների դպրոցից դուրս գալու դեմ պայքարելու հարցի մասին:

Համագումարն Ադրբեջանի Լուսժողկոմատի և կոմյերիտական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, վոր 1939–40 թվերի ուսման տարում բոլոր դպրոցական հասակ ունեցող յերեխաներին, հատկապես աղջիկներին, ընդգրկել դպրոցներում:

6. ԱդրԿ(բ)Կ XIV համագումարի վորոշումների համաձայն, յելնելով անգրագիտության



վերացման, հանրապետության ամբողջ բնակչությանը լիովին գրագետ դարձնելու պայքարի խնդիրներից — համագումարը պահանջում է Լուսժողկոմատից, ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմից, Պրոֆմիությունններից՝ մինչև 1939 թ. մարտի 8-ը հայտաբերել բոլոր անգրագետներին յեվ կիսագրագետներին, կազմակերպել նրանց ուսումը, սխտեմատիկաբար ստուգելով և գործնական ոգնություն ցույց տալով առանձին կույտ – բանակայիններին:

Լուսժողկոմատին անհրաժեշտ է կոմյերիտական և պրոֆմիությենական կազմակերպությունների հետ 1939 թվականի առաջին կիսամյակում կույտ – բանակայինների շրջանային հավաքներ անցկացնել՝ հանրապետության կին – յերիտասարդության անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործի հետագա բարելավման համար:

7. Համագումարը Լուսժողկոմատի առաջ կանանց ակումբների և խրճիթ – ընթերցարանների աշխատանքի ստուգման հարցն է դնում՝ 1939 թվականի յերկրորդ յեռամսյակում, և խնդրում է վերանայել ակումբային ղեկավար աշխատողների կազմը, ամրապնդելով այն քաղաքականապես գրագետ և ստուգված ընկերներով, և ակեկացնել բյուջետային հատկացումները՝ ակումբները պահելու համար:

Կոչ անելով կին յերիտասարդությանը լայն ծավալելու կուլտուրական աշխատանքը գյու-

ղում, կոլտնտեսություններում, խրճիթ–ընթերցարաններում, ակումբներում, համագումարը խնդրում է ԱդրՍՍՀ-ի Ժողկոմխորհին կից Արվեստների գործերի վարչությանը՝ բարելավել իր ղեկավարությունը կոլտնտեսային թատրոնների անսամբլների, ինքնագործ խմբակների վրա, օգնելով նրանց ստեղծագործական աշխատանքում, նույնպես և սիստեմատիկ կերպով գյուղական շրջաններն ուղարկելով մասնագիտական թատրոններ, անսամբլներ, գեղարվեստական բրիգադներ:

Արվեստների գործերի վարչությունն Ադրբեջանի ԼԿՅԵՄ Կենտկոմի հետ միասին 1939 թվականի ամառը պետք է անցկացնեն կին-յերիտասարդության գեղարվեստական ինքնագործունեության հանրապետական օլիմպիադա, նախօրոք մրցություն հայտարարելով կոլտնտեսությունների և ձեռնարկությունների միջև — ինքնագործունեության տարբեր ձևերի լավագույն կատարման համար:

Համագումարն առանձին ուշադրություն է հրավիրում հանրակացարաններում աշխատանքները կազմակերպելու անհրաժեշտության վրա: Կին յերիտասարդությունն իր միջից պետք է կոմյերիտական և պրոֆմիութենական կազմակերպություններին հանրակացարաններում կուլտ–մասսայական աշխատանքի կազմակերպիչներ տա:



Լուսժողկոմատը հետագայում պետք է բարելավի մանկապարտեզների ղեկավարությունը, առանձին ուշադրություն դարձնելով մանկապարտեզների համար դաստիարակների կադրեր պատրաստելու վրա, օգտագործելով նրանց ուղղակի նշանակությամբ: Ադրբեջանի կոմյերիտմիության Կենտկոմը պետք է 1939 թվականի ընթացքում 100 կոմյերիտուհի առաջադրի մանկապարտեզներում աշխատելու համար:

8. Համագումարը կոմյերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների կարևորագույն խնդիրն է համարում կին յերիտասարդության մեջ ինտերնացիոնալ դաստիարակության ուժեղացումը, պայքարելով տեղական յեվ մեծապետական շովինիզմի ամեն տեսակի արտահայտության դեմ՝ Ադրբեջանի կին յերիտասարդությանը ծանոթացնելով միութենական հանրապետությունների կյանքի, կենցաղի յեվ աշխատանքի հետ՝ փորձի փոխանակման կարգով փոխադարձաբար բրիգադներ ուղարկելով, եքսկուրսիաներ կազմակերպելով, սոցմրցման պայմանագրեր կնքելով և այլն:

9. Համագումարը պահանջում է Ադրբեջանի Առողջապահական ժողկոմատից՝ յերիտասարդ մայրերին սպասարկելու համար կուլտուրական հարմարություններ ստեղծելու աշխատանքը բարելավել, Ադրբեջանի շրջաններում լայն ծավալելով կանանց և յերեխաների կոնսուլտացիաների և մանկամսուրների ցանցը, հատկապես այն

շրջաններում ու գյուղերում, ուր դրանք դեռևս չկան:

Առողջժողկոմատը պետք է ապահովի մանկամսուրային ցանցը փորձառու կադրերով, այդ նպատակով կազմակերպելով հատուկ կուրսեր՝ պատրոնաժային քույրեր, դաստիարակչուհիներ, մանկամսուրային քույրեր, մանկավարժներ պատրաստելու համար, ներգրավելով այս կուրսերը մեծ մասամբ կին յերիտասարդությանը:

Համագումարն անհրաժեշտ է գտնում Ադրբեջանի բժշկական ինստիտուտում ունենալ հայկական բաժին:

Աբորտների դեմ պայքարելու նպատակով ուժեղացնել բացատրական սանիտարա-դաստիարակչական աշխատանքը կանանց բոլոր կոնսուլտացիաներում, ծննդյան տներում և մանկամսուրներում: Անհրաժեշտ համարել շրջանային կենտրոններում կանանց և յերեխաների կոնսուլտացիաներին կից սոցիալական-իրավաբանական ոգնության խմբակների ստեղծումը, այս աշխատանքներում ներգրավելով կին յերիտասարդությանը:

Կին յերիտասարդության համագումարն անհրաժեշտ է համարում, վոր Հողժողկոմատը և Առողջապահության ժողկոմատը միացյալ կերպով մշակեն կոնկրետ միջոցառումներ՝ կոլխոզներում մանկամսուրային յերեխաների սպասարկումը բարելավելու համար: Լուծել շենքի, սննդի, սարքավորման, բուժսպա-



4331-63

սարկման և դաստիարակչական աշխատանքի հարցը կոլխոզային մանկամսուրներում՝ նախատեսնելով այս ծախսերը կոլխոզների հաշվեգրերով և կոլխոզների վարչությունների պարտքը համարել մանկամսուրների կառուցումը:

1939 թվականին Առողջժողկոմատը պետք է ավարտի մանկական մսուրների կառուցումը Հոկտեմբերյան շրջանի լեռնային մասում:

Կոմյերիտական կազմակերպությունները պետք է բարելավեն աշխատանքը յերիտասարդ մայրերի մեջ, ամենորյա ոգնություն ցույց տալով և գրավելով նրանց՝ կազմակերպությունների հասարակական կյանքին, շրջաններում, ձեռնարկություններում, կոլխոզներում, սովխոզներում յերիտասարդ մայրերի համար ժողովներ հրավիրելով, կազմակերպելով մանկական սենյակներ և անկյուններ:

Կին յերիտասարդության համագումարը խնդրում է կոմյերիտմիության Կենտկոմին՝ պարտավորեցնել կոմյերիտմիության շրջկոմներին՝ բարելավելու աշխատանքը մոր ու մանկան պաշտպանության հիմնարկներում (մանկամսուրներում, կոնսուլտացիաներում և այլն), ընտրելով լավագույն յերիտասարդներին, ամրացնելով նրանց այս հիմնարկությունների աշխատանքի մեջ:

Խնդրել Ադրբեջանի Առողջժողկոմատին՝ մայրերի համար ադրբեջաներեն լեզվով հրատարակել հանրամատչելի գրականություն մոր հասա-



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм.ССР

կի յերեխաների դաստիարակության ու խնամքի և աբորտների վնասակար լինելու մասին: Խնդրել Թեթևարդժողկոմատին, վոր 1939 թվականին ավելացնի բաց թողնվող մանկական իրերի կոմպլեկտների թիվը՝ նորածիններին լրիվ ապահովելու համար:

Խնդրել Ադրբեջանի Առևտրի ժողկոմատին՝ շրջանային խոշոր կենտրոններում կազմակերպել հատուկ «Մոր և մանկան» խանութներ, մատակարարելով նրանց անհրաժեշտ ապրանքներ յեվ մանկական պարագաների տեսակների կոմպլեկտներ:

Կին յերիտասարդության համագումարը հարց է հարուցում Ադրբեջանի Առողջժողկոմատի առաջ՝ 1939-40 թ.թ. ուսման տարում ավարտող մանկաբարձներից առանձին գյուղական շրջաններն ուղարկելու մասին: Միաժամանակ համագումարը հարց է դնում նաև դատախազական մարմինների առաջ՝ դատական պատասխանատվության կանչել այն բժիշկներին, վորոնք չեն ցանկանում շրջանները գնալ, ցուցադրական դատ կազմակերպել և պարտավորեցնել նրանց շրջանները գնալու:

Համագումարն անհրաժեշտ է գտնում կուրորտներում, սանատորիաներում և հանգստյան տներում կին յերիտասարդության համար ավելացնել տեղերի քանակը: ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմը և Առողջժողկոմատը կին յերիտասարդության ամենալավ ակտիվիստներից պետք է առաջ քաշեն



Առողջժողկոմատի սիստեմում ղեկավար աշխատանքի համար:

10. Ստախանովյան շարժումը լայն ծավալելու նպատակով հանձնարարել Հողժողկոմատին իր սիստեմում կազմակերպել ու ապահովել ստախանովականների աշխատանքի մեթոդների խորն ուսումնասիրությունը և նրանց փորձերը փոխադրել ամբողջ կին յերիտասարդության մեջ: Ներգրավել ամբողջ կին յերիտասարդությանը բարձր բերքատվության ողակները՝ ապահովելով ամենորյա ղեկավարություն և ոգնություն:

Համարելով, վոր ստախանովյան շարժման զարգացման պայմաններից մեկը գյուղատնտեսության աշխատավոր լայն մասսաների գիտակցության մեջ առաջավոր ագրոտեխնիկական գիտելիքների արմատացումն է, համագումարը խնդրում է Հողժողկոմատին՝ արմատապես բարելավել ագրոտեխնիկական ուսուցման գործը հանրապետության կոլխոզներում ու սովխոզներում՝ կին յերիտասարդության մեջ:

Անհրաժեշտ ուշադրություն դարձնել գյուղերում յերիտասարդ կանանց ինքնուրույն ագրոտեխնիկական ուսուցման համար պայմաններ ստեղծելու վրա, նրանց համար հրավիրելով բարձրորակ գյուղատնտեսական մասնագետներ՝ սիստեմատիկաբար դասախոսություններ, զեկուցումներ տալով, կազմակերպելով կոնսուլտացիաներ ամեն մի կոլխոզում ու սովխոզում և հատուկ գյուղատնտեսական գրադարան բացելով:

Ագրոտեխնիկա ուսումնասիրող կին յերիտասարդությանն ոգնելու համար ապահովել գյուղատնտեսական և զոոտեխնիկական հարցերի մասին մասսայական հանրամատչելի գրականության հրատարակչությունը:

Համագումարը բոլորովին անբավարար է համարում Հողժողկոմատի աշխատանքը մեխանիզատորական կին կադրերի և մասսայական վորակավորման կադրերի պատրաստման գործում և հարց է դնում Հողժողկոմատի առաջ՝ 1939 թվականին դպրոցների և կուրսերի միջոցով պատրաստել վոչ պակաս 700 կին կոմբայնավարներ և տրակտորիստներ, ավարտելուց հետո ապահովելով նրանց աշխատանքով ըստ մասնագիտության:

Կոլխոզային արտադրության մեջ կին յերիտասարդությանը ղեկավար աշխատանքի քաշելու համար համագումարը հարց է դնում Հողժողկոմատի առաջ — 1939 թվականին մասսայական վորակավորման կուրսերի միջոցով կին յերիտասարդությունից հազարից վոչ պակաս պատրաստել կոլխոզի նախագահներ, բրիգադիրներ, ողակավարներ և հաշվապահներ:

Խնդրել Ադրբեջանի Հողժողկոմատին՝ ղեկավար աշխատանքի քաշել կանանց, հետևյալ աշխատանքներում՝ շրջհողբաժնվարներ, ՄՏԿ-ի դիրեկտորներ, գլխավոր ագրոնոմներ և այլն, ստեղծելով բոլոր անհրաժեշտ պայմանները նրանց հետագա աճման համար: ԱդրԽՍՀ-ի Հողժողկոմատը պետք է ապահովի հանրապետության մեջ գյուղական տնտեսության առաջավորների յերեվան բերելը կին յերիտասարդության շարքերից և նրանց ներկայացնելը՝ 1939 թվականի գյուղատնտեսական ցուցահանդեսի թեկնածվության ցուցակի մեջ մտցնելու համար:



Համագումարը կոչ է անում կին յերիտասարդությանը բազմացնել աշխատավորուհիների շարքերը ֆաբրիկներում, գործարաններում, հանքերում, սովխոզներում, ՄՏԿ-ներում, կոլխոզներում և լայն ծավալել ստախանովյան շարժումը նավթի ու բամբակի պլանի կատարման պայքարում՝ ձեռնարկություններում, հիմնարկություններում, կոլխոզներում պահպանելով բոլշևիկյան աշխատանքային դիսցիպլինան, պայքարելով «Աշխատանքային դիսցիպլինան կարգավորելու միջոցառումների, պետական սոցիալական ապահովագրության պրակտիկան լավացնելու և այդ գործում բոլոր չարաշահությունների դեմ պայքարելու մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և Համպրոֆկենտխորհրդի 1938 թ. դեկտեմբերի 28-ի վորոշման կիրառման համար:

11. Նշելով, վոր կին յերիտասարդությունն անբավարար չափով է ներգրավված պաշտպանական — ֆիզկուլտուրային աշխատանքներում, համագումարը պահանջում է ՊԱՇԸ — Ավիաքիմի Կենտրոնական և Բաքվի խորհուրդներից, ԱդրԽՍՀ-ի Ժողկոմխորհին կից ֆիզկուլտուրայի

Ադրբեջանական և Բաքվի կոմիտեներից՝ ծավալել պաշտպանական – ֆիզկուլտուրային աշխատանքը կին յերիտասարդության մեջ—կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, գործարաններում, ֆաբրիկներում աղջիկներին գրավել ՊԱՋԸ – Ավիաքիմի շարքերը, սպորտային ընկերությունները և ռազմական մասնագիտություն ուսումնասիրող տարբեր խմբակներ: Համագումարն անհրաժեշտ է համարում 1939 թվականի ընթացքում անցկացնել կին յերիտասարդության համաադրբեջանյան սպարտակիադա և ՊԱՋԸ – Ավիաքիմի անդամ կանանց ռազմականացրած հավաք՝ նրանց աշխատանքը պաշտպանական խմբակներում ստուգելու նպատակով:

ՊԱՋԸ – Ավիաքիմի կենտրոնական և Բաքվի խորհուրդները, Ֆիզկուլտուրայի Ադրբեջանի և Բաքվի կոմիտեները 1939 թվականին պետք է կին յերիտասարդությունից պատրաստեն 30 օդաչու, 70 պլաներիստ, 150 պարաշյուտիստ, ապահովեն առաջին աստիճանի վորոշիլովյան հրաձգի նորմաների հանձնումը հազար հոգու կողմից, յերկրորդ աստիճանի—70 հոգու, ՊՍՊ—10 հազար հոգու, ՀՕՔՊ-ի — 10 հազար հոգու, ՊԱՊ-ի — յերեք հազար հոգու: Կին յերիտասարդությունից վորոշիլովյան հեծյալներ պատրաստելու համար լայն աշխատանք ծավալել նրանց մեջ:



ՊԱՋԸ – Ավիաքիմի կենտրոնական և Բաքվի կոմիտեներն ԱդրԼԿՅԵՄ Կենտկոմի հետ միասին 1939 թվականին պետք է ղեկավար պաշտպանական աշխատանքի քաշեն վոչ պակաս, քան 20 աղջիկ: ԱդրԽՍՀ Ժողկոմխորհին կից Ֆիզկուլտուրայի Ադրբեջանի և Բաքվի կոմիտեները կին յերիտասարդությունից պետք է ղեկավար աշխատանքի քաշեն վոչ պակաս 25 հոգի, նախորոք սրանց համար դասընթացներ կազմակերպելով: Համագումարը կոչ է անում կին յերիտասարդությանը՝ արձագանքել Խորհրդային Միության հերոսների կոչին՝ Կարմիր Բանակի 21-րդ տարեդարձի և Մայիսի մեկի առթիվ մայր հայրենիքին պաշտպանական նվերներ պատրաստելու մասին: Սոցիալիստական յերկրի յուրաքանչյուր հայրենասերի խնդիրն է՝ ուսումնասիրել ռազմական գործը, տիրապետել ռազմական մասնագիտություններից վորևե մեկին:

12. Համագումարը բոլոր խորհրդային, տնտեսական, կոմյերիտական, պրոֆմիութենական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում աղջիկներից ղեկավար աշխատանքի առաջ քաշելու անհրաժեշտության վրա, աճեցնելով պրոպագանդիստների և ագիտատորների նոր կադրեր, կոմյերիտական, տնտեսական կոոպերատիվային, պրոֆմիութենական, խորհրդային աշխատողների կադրեր:

Համագումարը կոմյերիտական կազմակերպությունների առաջ կին յերիտասարդության մեջ

Պատասխանատու թողարկող՝ ԱԵՎԼՈՒՆՑ
Տեխնիկական խմբագիր՝ ՍԻՄԽԱՑԵՎ

---

Сдано в набор 8/III-39 г.
Подписано к печати 11/III-39 г.
Колич. печ. знаков—33.852
Печ. листов 3/4.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ Арм ССР
им. А. Мясникяна

Главлит № 2021. Ст. 864 А-4 Зак. № 881. Тир. 500.
Тип. „III Интернационал" Баку, ул. Саратовца-Ефимова, 29.

ՀՀ Ազգային գրադարան
NL0230267

ЦЕНА 10 коп.

56.021

# РЕЗОЛЮЦИЯ

**Второго всеазербайджанского с'езда женской молодежи ЦК ЛКСМАз.**

Издательство детской и юношеской литературы

Баку — 1939 г.